6560

891.99.09[Էրզրումպատմ] 1448
Ե-66 Էրզրումպատմ
իմ կյանքից.

	701
14/VI	11
	14
	14

ՆՇԱՆԱՎՈՐ ՄԱՐԴԿԱՆՑ ԿՅԱՆՔԸ

ՅՈԹԵՐՈՐԴ ԳԻՐՔ

ԱԼ. ՇԻՐՎԱՆԶԱԴԵ

1858 – 1935

ՅԵՐԵՎԱՆ·1938

891.99-93
Շ

ՇԻՐՎԱՆԶԱԴԵ

ԳՐԱԽՊԱՐ է 1961 թ.

ԻՄ ԿՅԱՆՔԻՑ

Ա 6560 Ի-44

ԴԵՏՀՐԱՏ
ՀԼԿՅԵՄԿԿԿԻՑ ՄԱՆԿՊԱՏ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԲԱԺԻՆ



ՄԵՐ ՔԱՂԱՔԸ

Նախ ասեմ թե յես ով եմ։

Անդրկովկասի մի անկյունում կա մի քաղաք, անունը Շամախի կամ Շիրվան։

Ա՜հ, հրաշալի յե այդ քաղաքի բնությունը։

Այնտեղ յերկինքը կապույտ ե, ինչպես փիրոզա, յերկիրը բույսերով, ծաղիկներով փարթամ, ինչպես մի սքանչելի պարտեզ։ Այնտեղ ձմեռը յեղանակը մեղմ ե, դուրեկան, վոչ քամի, վոչ փոթորիկ։ Իսկ գարնանը և ամառը բարձրագագաթ ծառերի վրա գիշեր-ցերեկ յերգում են անթիվ սոխակներ։

Յեվ ինչ համեղ մրգեր կան այնտեղ, յեթե գիտենաք. ինչ հոտավետ պտուղներ։

Սուտ չի լինիլ յեթե ասեմ, վոր այդ քաղաքը յերկրային դրախտ կլիներ, յեթե չունենար մի մեծ դժբախտություն, այն ե՝ յերկրաշարժը։

Յես տեսել եմ յերկու անգամ մեծ, շատ մեծ յերկրաշարժ։

Ամեն անգամ հենց վոր յերկիրն սկսվում ե շարժվել, գետնի տակից լսվում ե ինչ-վոր խուլ թընդյուն։ Կարծես այնտեղ խնդանոթներ են արձակում։

Պատերը դիպչում են միմյանց, կենդանիները սարսափած սկսում են վազել դես ու դեն, շները վոռնալով, կովերը բառաչելով, վոչխարները մայելով, ձիերը խրխինջալով։ Մարդիկ փախչում են իրենց տներից փոքրիկ յերեխաներին գրկած։ Ամեն ինչ քանդվում է, ավերակ դառնում տներ, յեկեղեցիներ, ուսումնարաններ, բոլորը, բոլորը։

Այս է պատճառը, վոր մի ժամանակվա հարուստ և փարթամ Շամախին, այսոր այնքան աննշան է, խեղճ, աշխարհում մոռացված։

Բայց, չնայելով սրան, մարդիկ այնտեղ ելի ուրախ են, զվարթ։ Նրանք սրախոս են, սիրում են կատակներ անել, զվարճանալ։ Հարուստ չեն. բայց ինչ վոր ունեն, նրանով գոհ են և պառավ կանանց պես չեն տրտնջում։ Բարի մարդիկ են, շատ հյուրասեր, շատ բարեկամասեր։ Բայց մեր մեջ ասած, մի քիչ շատախոս են և պարծենկոտ։

Ահա այդ պստիկ և աննշան քաղաքում եմ ծնվել յես սրանից հիսուն ու յերկու կես տարի առաջ մի գարնանային գիշեր։

ԻՄ ԾՆՈՂՆԵՐԸ

Իմ հոր անունն եր Մինաս։ Նա մի շատ բարձրահասակ մարդ եր, խոժոռ դեմքով, թանձր շիկագույն բեղերով, վոր միշտ ծածկված եյին պահում նրա սեղմված բերանը։

Ո՜ հ, յես այժմ ել հիշում եմ նրա խորն ընկած կապույտ աչքերը, վորոնք թավ ունքերի տակից կայծեր եյին արձակում բարկության միջոցներին։

Մորս անունն էր Ովսաննա։

Դա մի միջահասակ, քնքուշ կազմվածքով կին էր, գեղեցիկ դեմքով և թանձր ու գանգուր մազերով։ Բաղաքուս նրան անվանում էին «Սիրուն Սոնա»։

Նա վոչ միայն դեմքով էր սիրուն, այլ և հոգով, սրտով, վարք ու բարքով։

Շատ բարի և զգայուն կին էր։ Հիշում եմ նրա դառը հառաչանքները, յերբ տեսնում էր մարդկանց ցավը ու տառջանքները։ Հիշում եմ նրա մեղմ, գուրեկան ժպիտները և թույլ ծիծաղը, յերբ ուրախ էր։ Նրա կինամոնագույն խոշոր աչքերը նայում էին սիրով ու գուրգուրանքով վոչ միայն յուր զավակներին, այլև բոլոր, բոլոր յերեխաներին։

Ցես նրան պաշտում էի։

Վորքան մայրս մեղմ էր և հեզ, այնքան հայրս խստաբարո յեր և հպարտ։

Այդ մարդը քիչ էր ժպտում, ավելի քիչ ծիծաղում։ Բայց ազնիվ էր, արդարասեր, ճշմարտախոս։ Յերբեք սուտ չէր ասում և ատելով ատում էր սուտ խոսողներին։ Վոչ վոքից չէր վախենում և սատում էր վախկոտներին, քանի-քանի անգամ նա մեն-մենակ ձիով գիշերներն անցել է մութ անտառներ ու ձորեր։ Քանի՞ քանի անգամ ավազակների յե հանդիպել և նրանց հետ հրացանաձգություն ունեցել։ Ցեվ չնայելով յուր արկածալի կյանքին, նա ապրեց ութսուն ու հինգ տարի։

Նա ինձ միշտ ասում էր.

— Եյ, Ալեքսանդր, կյանքումդ շատ անգամ փորձանքի կհանդիպես, չվհատես, հուսդ դիր աստծու վրա։ Թշնամիներ կունենաս, զգույշ կաց, բայց մի վախե-

նար։ Բարեկամներ կունենաս, հավատարիմ յեղիր նրանց, պահանջիր, վոր նրանք ել հավատարիմ լինեն քեզ։ Սուտ չխոսես, չխաբես. բայց տես ստախոսների հետ ել գործ կունենաս, չխաբվիս։

Թե հայրս և թե մայրս գրել-կարդալ չգիտեյին։ Բայց յերկուսն ել զգում եյին, վոր գրել-կարդալը լավ բան և։

Հայրս ժամանակ չուներ լինձնով զբաղվելու։ Տարին յերկու անգամ նա սրբում եր յուր չախմախի յերկայն հրացանը, արծաթապատ ծուռ կոթանի ատրճանակը, լայն դաշույնը, ձի նստում և գնում Ղուբա քաղաքը մի քանի ամսով։

Մայրս եր մեծ մասամբ հոգում իմ մասին։ Ցավ յես, ուղիղն ասած, նրան եմ պարտական, վոր այսոր գրել-կարդալ գիտեմ։

ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ

Ցոթ տարեկան եյի, յերբ մայրս ինձ տվեց ուսումնարան։

Ցես մի միջակ մանուկ եյի, վոչ անշնորհք, վոչ ել մեծ շնորհքով։ Աշխատասեր չեյի, բայց շատ ել ծույլ չեյի։

Ցես շատ միամիտ տղա եյի։ Հա, քանի միտս և, պատմեմ ձեզ իմ միամտության մասին մի զվարճալի բան։

Մի որ ուսուցիչս, վորին Սարգիս վարպետ եյին կոչում, ինձ վրա բարկացավ։ Դասս լավ չեյի պատրաստել։ Նա ականջս մի լավ քաշեց, հետո բաց արավ դասագիրքս և, ցույց տալով դասս, ասաց.

— Տես, եկուց այստեղից մինչև այստեղ ջուր կանես։

— Շատ լավ վարպետ, ջուր կանեմ,—պատասխանեցի յես։

Մեր փողոցից վոչ հեռու կար մի աղբյուր։ Մյուս որը դասագիրքս տարա. պահեցի նրա տակ այնքան, վոր բոլորովին ջուր դարձավ։

Բերի ուսումնարան և հպարտ-հպարտ ցույց տվեցի վարժապետիս։

Սարգիս վարպետն առաջ մի կուշտ ծիծաղեց։ Բարի մարդ եր։ Բոլոր աշակերտներն ել ծիծաղեցին։ Յես ապուշ-ապուշ նայում եյի սրա ու նրա յերեսին։

Հանկարծ Սարգիս վարպետը կատաղեց։ Նա հրամայեց բաց անել առաջ մի, հետո մյուս ձեռիս ափը և սկսեց քանոնով տուր վոր կտաս։

Լավ եր, վոր քանոնի տափակ կողմովն եր դարկում և վոչ սուր կողմով։ Այնուամենայն վ, ձեռներս սաստիկ ցավեցին։ Յես լաց յեղա։

— Անիրավ,—ասաց Սարգիս վարպետը.—յես քեզ յերեկ ասացի, վոր դասդ ջուր անես, այսինքն անգիր անես ջրի պես, իսկ դու տարել ես գիրքդ թրջել ու բերել։ Դե լավ, քիչ սըտրգա, դու դասագիրքդ ես ջուր արել, յես ել քո աչքերը ջուր արի։ Տես, մյուս անգամ ասածս լավ հասկացիր։

Յեվ դուրս բերելով գրպանից մի մեծ դույնզգույն թաշկինակ, սրբեց աչքերիս ջուրը, այսինքն արտասուքը։

Ցերկար, շատ յեր կար ժամանակ աշակերտները չեյին մոռանում իմ արածը և միշտ ծաղրում եյին ինձ։

Սարգիս վարպետը բողոքական եր։ Նա մինչև ոնդամ ինքն եր առաջին անգամ բողոքականություն ընդունել հայերի մեջ։ Իսկ իմ ծնողները լուսավորչականներ եյին։

Մեր ծխական քահանան, Տեր-Սահակն ատելով ատում եր բողոքականներին։ Նա միշտ իմ մորը հանդիմանում եր, վոր ինձ տվել է բողոքականների և վոչ լուսավորչականների ուսումնարան։ Իսկ մայրս թեև ագետ կին եր, բայց հասկանում եր, վոր բողոքական, լուսավորչական թե կաթոլիկ միևնույնն է, բոլորն էլ մարդիկ են։

— Միայն թե իմ յերեխան ուսում ստանա,— ասում եր նա տեր հորը։

Բայց և այնպես, չես յերկար չմնացի Սարգիս վարպետի մոտ։ Մայրս ինձ դուրս բերեց և հանձնեց Տեր-Ավանեսի դպրոցը։

ՏԵՐ ԱՎԱՆԵՍԸ

Հիմի լսեցեք թե այդ Տ'եր-Ավանեսն ով եր և ինչ։

Դա մի հասարակ գյուղացի յեր յեղել, յեկել եր մեր քաղաքը, գրել կարդալ սովորել և յեկեղեցում տիրացու դարձել։ Թե ինչպես եր քահանա ձեռնադրվել, ասված գիտե։ Գլխավորն այն է, վոր ինքը հազիվ հազ ավետարանը կարդալ գիտեր, ուսումնարան եր քաց արել և դաս էլ եր տալիս մեզ, ամեն մեկիցս վերցնելով ամիսը մի ռուբլի։

Ցեվ ինչ դաս, «այբ ժե ճե ռա, բեն ինի մեն սեռ» և այլն, բայց այն էլ ասեմ, վոր մեծ աշակերտները կարդում եյին սաղմոսագիրք, ավետարան, ավե-

լի ուսյալներն աստվածաշունչ, մինչև անգամ ճարտասանություն։

Ցեռ արդեն ուսյալներից էր։

Մի լղար դեմքով, սև, բարձր և յերկար միրուքով մարդ եր այդ Տեր-Ավանեսը։ Նրա ունքերը միշտ կիտված եյին, յերեսը թթված, կարծես, միշտ փորը ցավում եր։

Փոքրաքիս յերեսը խաչակնքում եր և ասում.

— Տեր, դու չարը խափանես։

Յերկու բանում նա շատ յեռանդուն եր, ուտելում և ծեծելում։

Ամենից ավելի սիրում եր խնձորի տոլմա և փախլավա։ Ընկույզի հալվա ել եր սիրում, բայց ավելի պակաս, քան ճառով փլավ։

Մեր ծնողներն այդ բանը գիտեյին, ուստի ով կարող եր տեր-հորը բաժին եր ուղարկում։ Ցեռ այսորը ել զարմացած եմ, թե ինչու այդ մարդն ուտում եր ուտում, ելի լղար եր մնում։

Նա ծեծում եր, մանավանդ այն աշակերտներին, վորոնց ծնողները չեյին կարողանում խնձորի տոլմա կամ ընկույզի հալվա ուղարկել նրա համար։

Ամենից շատ ծեծվում եր Շամչիանց Ավետը։ Այն ել ասեմ, վոր դա մի վերին աստիճանի անհանգիստ տղա յեր. շարունակ թռչկոտում եր, պարում, յերգում։ Յերբեմն դասամիջոցներին կանգնում եր ձեռների վրա, գլուխը դուրս եր բերում վոտների արանքով և ասում։

— Փիշ-փիշ, փիշ-փիշ։

Նա սիրում եր սրան-նրան խաղտել կամ կմըշտել։ Հակառակի պես միշտ իմ կողքին եր նստում և

դասի ժամանակ շարունակ կմշտում եր ինձ։ Առանց այդ էլ ով ասես, ինձ կմշտում եր, վորովհետև մանուկ ժամանակս յես բավական հաստ էյի։

Մի որ Ավետն ինձ այնպես պինդ կմշտեց, վոր յես գոռացի.

— Վայ, վայ։

— Ի՛նչ պատահեց,—հարցրեց տեր-Ավանեսը, յերկայն ճիպոտը բարձրացնելով։

— Ճանճը կծեց ականջս,—պատասխանեցի յես։

Բանն այն է, վոր յես վախեցա մատնել Ավետին։ Նա կարող եր փողոցում ինձ մի լավ ծեծել, վորովհետև ինձնից մեծ եր և ուժեղ։

— Ճանճի կծելով կարելի՞ յե արջի պես բղավել,—կատաղեց տեր-Ավանեսը։

Բարեբախտաբար, այդ որը մենք խնձորի տոլմա ունեցինք և տեր հայրն արդեն յուր բաժինն ըստացել եր, նա ինձ չծեծեց։

Ցերեկն տեր-Ավանեսը գալիս եր մեր տունը։ Ամեն անգամ «պահպանիչ» եր ասում։ Հետո գովում եր իմ ժրությունը և աշխատասիրությունը։ Մայրս նրան հյուրասիրում եր ջաջի ողիով և մուրաբաներով։

Ծիծաղս գալիս եր, յերբ տեր-Ավանեսը մուրաբա եր ուտում։ Շատ անգամ ձմերուկի մեղրոտ կճեպը կամ վարդի տերևներն ընկնում եյին նրա յերկար միրուքի վրա և հետո սահում դեպի ֆարաջեն։ Մի անգամ ընկույզի մուրաբայի հետ յերկու ճանճ կուլ տվեց պռանց իմանալու։ Ցավ կարծում եմ այս եր պատճառը, վոր մյուս որը նա մի լավ ծեծեց յերկու աշակերտի, վոր ճանճերի հետ խաղում եյին։

Առհասարակ, հանգուցյալը համ լավ ուտում եր, համ էլ լավ ծեծում։

А 6560

ԱՎԵՏԻ ՔԻԹԸ

Պետք է ասեմ ձեզ, վոր Շամչիանց Ավետը շատ մեծ քիթ ուներ։ Ցեվ որ-որի վրա այդ քիթը մեծանում եր։

Աշակերտները շարունակ ծաղրում էին, անվանելով նրան «քիթ Ավետ»։ Նա բարկանում եր, կատաղում, աջ ու ձախ բռունցքով, վոտով գլխով սրան եր խփում, նրան։ Բայց վոր մեկին հաղթեր։ Զնայելով իր ուժին և քաջությանը, նա բոլորի վրա ընկըճվում եր ու խեղճանում իր քթի պատճառով։

Վերջը, տեսնելով, վոր հնար չկա ամենքի հետ կռվելու, սկսեց ինքն էլ ծաղրել իր քիթը։ Կարծում եր, վոր յեթե ինքը ծաղրի, ուրիշները կդադարեն ծաղրել։ Բայց չեղավ։ Քանի նա խեղճանում եր, այնքան աշակերտները յերես էին առնում։

Մանավանդ կար մի պատիկ տղա Աղալո անունով։ Դա կատարյալ յերկնային պատիժ եր Ավետի քթի համար։

Մի որ դասի ժամանակ Աղալոն թղթից շինեց մի կով, գլուխը թանաքով ներկեց և դրեց Ավետի քթի վրա։ Հետո հանգիստ կերպով գլուխը թեքեց դասագրքին, իբր թե դաս է սովորում։

Ավետը, ի հարկե, իսկույն կովը քթից դեն գցեց և բռունցքով մի լավ զարկեց Աղալոյի կողքին։

— Վայ մամա,—գոռաց Աղալոն և լաց յեղավ։

— Ի՞նչ պատահեց,—ասաց տեր-Ավանեսը, վոր այդ

ժամանակ մի մեծ տանձ եր կճպում, վոր ուտի։

— Ավետն ինձ խփեց,—գանգատվեց Աղալոն, հեկեկալով։

— Ի՛ժ, ոձի զավակ, յես քո քիթը կջարդեմ,— գոչեց տեր-Ավանեսը, մոտենալով Ավետին։ Դե յեկ մեջ տեղ, յեկ տեսնեմ։

Շատ բողոքեց խեղճ Ավետը, վոր մեղավորն Աղալոն է, ինձ ել վկա բերեց, վոչինչ չոգնեց։

Բանն այն է, վոր տանձն Աղալոյի հայրն եր ուղարկել տեր-Ավանեսի համար։ Ի՞նչպես կարելի յեր նրա վորդուն ծեծել գոնե այն որը։

— Ֆալախկան բերեք,—հրամայեց տեր-Ավանեսը։

Ֆալախկան բերեցին։ Այդ մի բավական յերկայն և հաստ փայտ եր։ Նրա ծայրերից կապած եր մի կաշվե ամուր թոկ։

— Պառկիր,—հրամայեց տեր-Ավանեսը,

Ավետը պառկեց խսիրի վրա յերեսն իվեր։

— Վոտներդ բարձրացրու,—շարունակեց տեր-Ավանեսը—Այ, այդպես։ Հագցրեք Ֆալախկան։ Շուտ տվեք, մի այդպես։

Յերկու աշակերտ բռնեցին Ֆալախկայի ծայրերը։ Ավետի վոտները ցցվել եյին ոդի մեջ անշարժ։ Պատատոված գուլպաների միջից յերևում եյին նրա մատները։

Տեր-Ավանեսը, ճիպոտը տալով ինձ, հրամայեց,

— Զարկիր։

Ուղիղն ասած, յես խղճացի Ավետին։ Ինչ մեղավոր եր նա, վոր մեծ քիթ ուներ։ Մի քանի անգամ ճիպոտը զարկեցի և կանգ առա։

— Զարկէ՛ր,—հրամայեց տեր-Ավանեսը, շարունակելով տանձն ուտել։

Մի քանի թուլ հարվածներ յես տալով, եկի կանգ առա։ Ավետը բառաչում եր հորթի պես։

Նրա վոտներն արդեն կարմրել եյին։ Մատներն այնպես ցցվել եյին, վոր կարծես, սպառնում եյին փորս խրվել։

— Խեղճ է,—ասացի յես,—մեղավոր չե։

Տեր-Ավանեսը մի ապտակ տվեց ինձ, առավ ճիպոտը և այնքան զարկեց, վոր խեղճ Ավետն ուշաթափվեց։

— Ջուր բերեք,—հրամայեց տեր-Ավանեսը։

Մի կուլա ջուր բերեցին, ածեցին Ավետի գլխին, ուշքի յեկավ։ Վերկացավ և տնքտնքալով ու կաղեկաղ գնաց, նստեց յուր տեղը։

Հետևյալ որը նա ուսումնարան չեկավ։

Ցերրորդ որն յեկավ գույնը թռած, լղարած և լուռ նստեց յուր տեղը։ Նա վոչ մի խոսք չարտասանեց մինչև վերջը։

Աշակերտները փորձեցին դարձյալ սրախոսել նրա քթի վրա, ուշադրություն չդարձրեց։ Յես մի քանի անգամ լսեցի նրա ծանր հառաչանքները։ Վորքան եկ փոքր լինեյի և միամիտ, հասկացա, վոր ընկերս տանջվում է։ Յես խղճացի նրան, կամեցա կարեկցություն արտահայտել Պետք է ասել, վոր տեր-Ավանեսի ուսումնարանում սեղաններ չկային, մենք նստում եյինք հատակի վրա ծալապատիկ։ Յես մի քանի անգամ ծնկովս կամացուկ զարկեցի Ավետի ծնկանը։ Նա չհասկացավ, կարծեց չարություն եմ ա-

նում։ Այն ժամանակ յես բռնեցի նրա ձեռը և ամուր սեղմեցի։

Այս անգամ նա հասկացավ, նայեց ինձ և բարեկամաբար ժպտաց։

— Ալեքսան,—դարձավ նա ինձ, յերբ փողոց դուրս յեկանք։—Յես ուզում եմ քեզ հետ խոսել։

Նրա ձայնը դողում եր, դեմքը լուրջ եր։

— Աա ինչ-վոր ուզում ես,—պատասխանեցի յես։

Մեկել որը դու չեյիր ուզում վոտներիս ճիպոտով խփել։ Յես հասկացա, վոր խղճում ես ինձ։ Շնորհակալ եմ։ Դու լավ տղա յես, դու մեր հարևանն ես։ Դու չես ծաղրում իմ քիթը։ Ջեռդ տուր, բարեկամներ ենք։

Յես զգացված սեղմեցի ձեռը։

— Գալով Աղալոյին,—շարունակեց նա,—դու կըտեսնես այս բոպեյին, թե ինչպես կխրատեմ նրան։

Այս ասելով, Ավետը վազեց առաջ, բռնեց Աղալոյի թևերը յերկու ձեռներով և ասաց.

— Այ դու կատվի դունչ, մկան պոչ, խլեզ, քո պատճառով իմ վոտները ֆալախկայի մեջ դրին, ծեծեցին, ուռցրին։ Հիմա եկ ցավում են։ Դու ծաղրում ես քիթս հա, դե կեր։

Յեվ սկսեց ծնկով արագ-արագ խփել Աղալոյի ծնկներին, փորին, կրծքին, այնքան վոր տղան ըղավեց, մեզ կանչելով ոգնություն։

Մենք հազիվ կարողացանք Աղալոյին ազատել Ավետի ամուր ճանկերից։

Այդ որից Ավետն և յես դարձանք բարեկամներ։

Ցեռ կռվում եյի ամենքի հետ՝ ով ծաղրում եր նրա քիթը։

ՏԱՏԻՍ ՎԵՐՔԸ

Հայրս աստվածաշունչ շատ եր սիրում և ամեն յերեկո ինձ ստիպում եր կարդալ։

Ցեռ նստում եյի մինդարի վրա ծալապատիկ և բարձր ձայնով կարդում։

Մայրս, մի կողմ նստած, թոռ եր հյուսում, մեծ մայրս շարունակ քթախոտ եր քաշում և փռշտում։ Իսկ հայրս, վոտները ձգած, յերկայն չիրուխը բերնին, աչքերը հառակի մի կետին հառած, ուշադիր լսում եր։

Տեղ-տեղ նա ընդհատում եր ինձ, ասելով.

— Այդ կտորը մեկ էլ կարդա։

Այսպես եյին անցնում իմ յերեկոները։

Գիշերները քնում եյի տատիս հետ։ Ցեվ ամեն գիշեր նա ինձ պատմում եր հեքյաթներ։ Ո՜հ, յես շատ եյի սիրում այդ բարձրահասակ, հաղթանդամ պառավին, վոչ պակաս քան մորս և ավելի քան-հորս։

Մի գիշեր, յերբ նա շապիկը փոխում եր, յես նրա աջ կողքի վրա տեսա մի մեծ սպի, այսինքն վերքի հետք։ Նրա յերկայնությունը կլիներ մի մատիսի մեկ ու կիսի չափ։

— Տատ, այդ ինչ է կողքիդ վրա,—հարցրի յես հետաքրքրված։

Տատիս դեմքը մռայլվեց։

— Քո բանը չէ,—ասաց նա։

Ցեռ լռեցի, բայց այնուհետև սպին ինձ ավելի հետաքրքրեց։ Ամեն յերեկո հարցնում եյի տատիս,

թե ինչպես և վիրտեղ է տեսել այդ վերքը, նա պատասխանում էր.

— Հետո կպատմեմ, հետո։

Ցավ միշտ, երբ այս ասում էր, նրա ձայնը դողում էր, դեմքը մթնում։

Հետաքրքրությունից սիրտս թրթռում էր, չես անհամբեր սպասում էի, երբ պիտի տաս պատմի յուր վերքի մասին։ Բայց նա շարունակ հետաձգում էր յուր պատմությունը։ Ցերբեմն, երբ չես շատ էի թախանձում, բարկանում էր վրաս։

Չմոռանամ ասել, որ այդ կինը յուր վորդուն պես մռայլ էր և խստաբարո։ Նա միշտ տխուր էր։ Ասեմ դրա պատճառը քանի միտս է։ Նա ուներ յերկրորդ վորդի, որ իմ հորյեղբայրն էր։ Այդ մարդը, վորի անունն էր Հարություն, շատ սանձարձակ էր, ծուլ, շռայլ և արբեցող։

Ամեն գիշեր նա թափառում էր գինետներում, կռվում սրա ու նրա հետ, ծեծում, ծեծվում։

Տատս նրան սիրում էր անչափ և միշտ աղերսում էր նրան թողնել գինետները, վատ ընկերներին և դառնալ բարի, աշխատասեր մարդ։ Վոչինչ չէր ոգնում։

Մի յերեկո նա, վերջապես, գիջեց իմ թախանձանքին և համաձայնեց պատմել յուր կողքի վերքի մասին։

— Ո՜հ,—ասաց նա,—քեզնից ազատվել չի կարելի։ Նստիր և ականջ դիր։

Ցավ նա, մի պողուց քթախոտ քաշելով, փռշտաց մի քանի անգամ և ահա թե ինչ պատմեց...

— Սիրելի Թոռնիկս,—այսպես սկսեց տատս իր պատմությունը, մաղերս շոյելով յուր չորացած և պողպատի պես ամուր մատներով,—դու գիտես, վոր յես, բացի յերկու վորդուց, ունեմ չորս աղջիկ։

— Նուրջի, Վոսկի, Շուշան և Թագուհի հորաքույրերս,—շտապեցի ավելացնել յես արագ, արագ։

— Այո,—շարունակեց տատս,—մի անգամ ես քթախոտ քաշելով և փռշտալով։ Ամենից փոքրը Թագուհին է և ամենից հարուստը։ Դեռ սրանից քսան տարի առաջ նրա ամուսինն ամեն ամառ գնում եր Ռուսաստան ապրանք բերելու։ Ահա հենց այդ ժամանակվա մասին է պատմությունս։ Ականջ դիր։

Յես արմունկներս դրի ծնկներիս վրա, գլուխս հենեցի ձեռներիս ափերին, աչքերս հառեցի տատիս յերեսին և սկսեցի ուշադրությամբ լսել։

— Յերբ Թագուհու մարդը քաղաքից հեռանում եր, աղջիկս մնում եր մեն-մենակ։ Նա յերիտասարդ եր, նոր եր ամուսնացել, դեռ յերեխաներ չուներ։ Նրա տունը լիքն եր Խորասանի գորգերով, Բիրմանի շալերով, Չին ու Մաչինի ամաններով, Մոսկովի թանկագին մաշկեղենով, վոսկեղենով, արծաթեղենով։ Այն ժամանակ շաբաթ չեր անցնում, վոր մեր քաղաքում սրան-նրան չկողոպտեին։ Յես աղջկաս մենակ թողնել չեյի կարող։ Գիշերներն անց եյի կացնում նրա մոտ, վոր գողերից և ավազակներից պաշտպանեմ։

Յես խորին պատկառանքով նայեցի տատիս հրակայական թիկունքներին և առնական բազուկներին։ Դեռ յերեկ նա ցորենի ջվալը մեն-մենակ բարձրաց-

ըել եր և դրել մշակի մեջքին։ Ինչ ուշ կունենար քսան տարի առաջ։

— Մի գիշեր լես ու հորաքույրդ քնած եյինք տան պատշգամբի վրա,—շարունակեց նա մռայլ ձայնով։— Ամառային գիշեր եր, սենյակում տոթից շունչ քաշել չեր լինում։ Դու գիտես, վոր այդ պատշգամբի ծայրում կա մի լուսամուտ, վոր նայում է դեպի մի փոքրիկ պարտեզ։ Շատ եյի քնել թե քիչ—չգիտեմ, մեկ ել լսեցի, վոր լուսամուտից ինչ-վոր ծանր բաներ ընկան պատշգամբի վրա։ Ցես զարթնեցի, նստեցի անկողնիս մեջ։ Լռություն. ամեն ինչ հանդարտ եր։ Միայն հեռվից շատ հեռվից լսվում եյին շան հաջոցներ։ Լուսին չկար, բայց յերկինքը պարզ եր, աստղերը պսպղում եյին ալմաստի պես։

Նայեցի աջ ու ձախ—վոչ վոք և վոչինչ։ Հորաքույրդ հանգիստ քնած եր։ Ցես նորից պառկեցի և վերմակը քաշեցի գլխիս։ Նոր աչքերս խուփ եյի արել, հանկարծ վոտներիս վրա զգացի մի ինչ-վոր ծանրություն և ցավ։ Կարծես, մեկն ինձ կոխկռտելով, անցավ...

— Տատ,—գոչեցի յես,—ընդհատելով պառավի խոսքը,—յես վախենում եմ։

Տատս գրկեց ինձ, սեղմեց յուր լայն կրծքին։

— Հիմար, ինչիցն ես վախենում, յես այստեղ եմ,—շարունակեց նա, գլուխս համբուրելով։ Ցես արագությամբ վոտքի թռա, գոռալով. «Ո՞վ եր նա»։ Աստղերի լուսով պատշգամբի ծայրում նշմարեցի հինգ-վեց մութ պատկերներ։ Մեկը նրանցից կամացուկ մոտեցավ այն սենյակի դռներին, վորտեղ գըտնվում եյին հորաքրոջդ թանկագին իրերը։

Ցեռ իսկույն հասկացա բանի եյությունը։ Ավազակներ եյին։ Իմ ձայնից հորաքույրդ զարթնել եր և նույնպես վոտքի կանգնել։ Սև պատկերներից յերկուսը մոտեցան ինձ։ Կիսախավարի մեջ նկատեցի, վոր նրանք զինված են մեծ-մեծ դաշույններով։ Թոռնիկս, մարդ վտանգների ժամանակ չպիտի ուշքը կորցնի։ Սառնությունը հաղթության քույրն է։ Ցեռ չշվարվեցի։ Առանց յերկար մտածելու վերցրի վերմակս և մի ակնթարթում ձգեցի ինձ մոտեցողների գլխին։ Հորաքույրդ հետևեց իմ որինակին։

— Անիծվածներ, յես ձեզ կխեղդեմ շան պես,— գոչեցի յես,— և յերկուսին միասին գրկելով, բարձրացրի ու գցեցի լուսամուտով դեպի պարտեզ...

Արտասանելով այս խոսքերը, տատս կանգ առավ։ Ցերկյուղից և ուրախությունից սիրտս թրթռում եր բռնված ծտի պես։

Տատս հանգիստ եր։ Նա քթախոտ եր քաշում։

— Հետո, հետո,— գոչեցի յես անհամբերությունից շնչասպառ։

— Ոչ, հորաքույրդ քաջ կին է,— շարունակեց պառավը հիացմամբ։ Նա իմ աղջիկն է իսկ և իսկ։ Նա յել մեկին շպրտեց դուրս։ Ցեռ վերցրի բարձս և ձգեցի այն մեկի յերեսին, վոր մոտեցել եր զռներին։

Մնացյալները մոտեցան ինձ։ Բայց յես այլևս վախ չունեյի։ Հարձակվեցի նրանց վրա, յերկար մինդարը վերցնելով։

— Ոգնություն, ոգնություն,— աղաղակում եր հորաքույրդ,— մեզ սպանում են։

Սկսվեց անհավասար կռիվ յերկու անզեն կանանց և յերեք ավազակների մեջ։ Ոչ, յեթե ձեռքիս

լիներ մի դաշույն, վոչ մեկին կենդանի չեյի թողնիլ։

Բակում լսվեցին ձայներ։ Մեկը հրացան արձակեց։ Դրանք մեր հարևաններն եյին, վոր յեկել եյին, մեզ ոգնելու։ Նրանք զինված եյին վորը հրացանով, վորը դաշույնով, վորը փայտով։

Հանկարծ կողքիս վրա զգացի ինչ-վոր տաքություն, ապա սառնամանիք ցավ։ Ձեռս մոտեցրի, զգացի թացություն։

Ինձ վիրավորել եյին դաշույնով։ Արյունը հոսում եր աղբյուրի պես։ Յես ուշաթափվեցի, ընկա։

Բայց տունը և աղջկաս կյանքն ազատված եյին։ Ավազակները փախան, տանելով իրենց հետ ջարդված ընկերներին։

— Ահա իմ վերքի պատմությունը, թոռնիկս,— ավարտեց տատս, մի անգամ ևս քթախոտը մոտեցնելով յուր քթի լայն պնչերին։—Հանգստացար։ Այժմ պառկիր և քնիր։

Բայց յես այնքան ազդվել եյի, այնքան հուզվել, վոր այդ գիշեր մինչև լույս չկարողացա աչքերս փակել։

ՄԵՐ ԹԹԵՆԻՆԵՐԸ

Մենք ունեյինք հինգ թթենի—մեկը բակում, չորսը փողոցում։

Հենց վոր թթի ժամանակը գալիս եր, այդ ծառերը դառնում եյին իմ պարծանքը և հոգսը։

Ագատ ժամերիս մեծ մասը նրանց եյի նվիրում։

Զարահճի մանուկները հանգստություն չեյին տալիս խեղճերին։ Ով ճարպիկ եր—բարձրանում եր

Նրանց վրա և կապկի պես ճյուղից ճյուղ վոստոստալով, ուտում եր համեղ պտուղները։ Ով չեր կարող—ցածից քարեր և փայտեր եր գցում և թուքը թափում գետնին։ Ել չելին սպասում, վոր պտուղը հասունանա, կարգին թափ տանք և բաժանենք ամենքին։

Ձեք կարող յերևակայել, թե այդ բանը վորքան վշտացնում եր ինձ։ Հաղիվ անմեղ պտուղները զարդարում եյին կանաչ ճյուղերը, հաղիվ ծառերն սկըսում եյին հպարտ-հպարտ մտիկ անել դեպի վերկապույտ յերկնքին, դեպի վար—անցորդներին—կողոպուտն սկսվում եր։

Ցես ասում եյի ամենքին.

— Տղերք, վորքան ուզում եք կերեք թուքը, բայց ծառերին մի չարչարեք։ Մեղք է։

Ո՞վ եր լսում ինձ։ Զար ձեռներն որը մինչև յերեկո քարեր ու փայտեր եյին արձակում խեղճերի վրա և նրանց տանջում։ Շատ անգամ մի յերկու թթի համար ահագին վոստեր եյին կոտրում։

Ցես եյի միայն նրանց պաշտպանը։ Ախ, այդ կանաչագարդ վոստերը, վորպիսի ճչով և աղաղակներով եյին պոկվում ճյուղերից և ընկնում գետնի վրա։ Ամեն անգամ յերբ տեսնում եյի նրանց սալահատակի վրա սփռված, սիրտս եր մըղկտում։ Ինձ թվում եր, վոր դրանք իրենց մայրերի կրծքից խլված ու սպանված յերեխաներ են, և մայրերը վողբում են նրանց։

Ամենից ավելի կարմիր թթի ծառերն եյին չարչարվում, վորովհետև նրանց պտուղն ավելի համեղ եր։ Լացս եր գալիս, յերբ վայր ընկնող վոստերի հետ ընկնում եյին հասունացած հատիկները։ Կարծես, դը-

բանք ծառերի արցունքները լինեին։ Կարմիր արցունքներ, արյան արցունքներ։

Ո՜հ, սիրելի ծառեր, մանկությանս սքանչելի ընկերներ, քանի՜-քանի՜ տարի յե՛ս ձեզ չեմ տեսել։

Զորացե՛լ եք արդյո՞ք, թե՞ անգութ կացինը կըտրել է ձեզ բնից։ Եթե դեռ կենդանի յե՛ք, ո՞վ է ձեզ պաշտպանում ձեր ծերության հասակում, աղնիվ բարեկամներ։ Հիշում եմ ձեզ անհուն սիրով և յերախտագիտությամբ։ Դուք ինձ շատ եք ուրախացրել, շատ հիացրել, շատ կերակրել։

Յեվ քանի՜-քանի անգամ ամառվա շոգ որերին պատսպարել եք ինձ ձեր հովասուն ճյուղերի տակ ու զովացրել։ Քանի՜-քանի անգամ յես ձեր պատճառով ծեծվել եմ և ծեծել։ Ա՜հ, հիմա յել գլխիս վրա մնում է այն վերքի տեղը, որ ստացա մի պատանու դցած քարից։

Մնացե՛ք բարև, աղնիվ ընկերներ, յես այլևս ձեզ չեմ տեսնիլ...

ԳԱՍՊԱՐ ՎԱՐԺԱՊԵՏԸ

Մի տարի անցած ինձ դուրս բերեցին տեր.-Ավանեսի մոտից և տվեցին Գասպար վարժապետին։

Մինչև հիմա յել չգիտեմ ինչու՞ համար եր այդ տեղափոխությունը։ Յես արդեն ճարտասանությունը Ջրի պես եյի կարդում, իսկ ավետարանն ու աստվածաշունչն անգիր գիտեյի։

Թե ինչ սովորեցրեց ինձ Գասպար վարժապետը, միտս չե։

Բայց յերբեք չեմ մոռանա նրա կերպարանքը։

Դա մի հաստավիզ, հաստափոր մարդ էր, մոտ քառասունհինգ տարեկան։ Ցերեսն ու մեծ-մեծ ականջները այնքան կարմիր էին, վոր բարկանալիս կապտում էին, բադրմջանի պես։

Բայց նա շատ քիչ էր բարկանում և իսկի մեզ չէր ծեծում։ Միայն շուտ-շուտ հազում էր և յերբեմն այնպես սաստիկ, վոր կարծում էինք, թե պիտի խեղդվի։ Ցերբ հազը վերջանում էր, նա յուր խոշոր և պլպլող աչքերը տնկում էր մեզ վրա և ժպտում։ Կարծես, ասում էր.

— Տեսաք ինչ լավ պրծա։

Մենք սիրում էինք Գասպար վարժապետին։ Նա այնքան բարի յեր, վոր հաճախ մեզ հետ կատակներ էր անում։

Դասերի ժամանակ վոգևորվում էր։ Արագ-արագ անց ու դարձ էր անում հետ ու առաջ։ Նրա վոտները կարճ էին և մի քիչ ծուռ, ուստի ման էր գալիս ինչպես բադ—աջ ու ձախ յերերվելով։ Նրա լայն լայվերդի գույնի շալվարը շրջազգեստի պես ծալծալվում էր ու ալիքներ գոյացնում։ Նրա դուրս ցցված փորից արծաթե գոտին ստեպ-ստեպ ցած էր իջնում։

Գասպար վարժապետը շատ էր սիրում Մատրասի գինի և խոզի մսի խորոված։ Հաճախ մենք նրան տեսնում էինք գինետներից դուրս գալիս։ Ցերբեմն նրանից տկճորի հոտ էր փչում։

Մի բան ասելով ասում էր Գասպար վարժապետը—աշակերտների հարցերը։ Ցերբ նրան թվաբանությունից կամ քերականությունից վորևե բան էինք հարցնում, նա միշտ ասում էր.

— Զանվես մի տարեք, կմեծանաք, կիմանաք։

Իրավ, հենց վոր մեծացանք, իմացանք, վոր Գասպար վարժապետը վոչինչ չգիտեր։

Բայց ներողություն, սխալվեցի մի վոքր։ Գասպար վարժապետը շատ լավ գիտեր այն բանը, ինչ-վոր այսոր անվանում են գործնական դասատվություն։ Շաբաթը մի կամ յերկու անգամ նա մեզ տանում եր քաղաքից դուրս յուր կնոջ համար սունկ ժողովելու կամ փիփերտ ու դաղձ քաղելու։ Իսկ տանը մեզ ստիպում եր թափ տալ յուր գորգերն ու խսիրները, հոտից ջուր դուրս բերել։ Աչնանը բարձրանում եյինք նրա տան տափակ հողյա կտուրը և նրա ճեղքերը հարթում մոխիրով կամ հարդով։ Հետո բանքվով ծեծում եյինք, ամրացնում, վոր առաստաղը չկաթի անձրևի ժամանակ։ Ձմեռն ել կտուրը մաքրում եյինք ձյունից։

Մի անգամ աշակերտներն ապստամբվեցին, ասելով, թե չեն ուզում այդ տեսակ դասերով պարապել։ Գասպար վարժապետը չկարողացավ, բայց շատ խնդրեց, վոր «գժություն» չանենք։

— Դուք իմ սիրուն բալաներս եք, ասաց նա,— խոսքս տափը մի գցեք, թե չե կնիկս...

Բանն այն ե, վոր այդ որը Գասպար վարժապետի կինը լվացք ուներ։ Մենք պետք և լվացած շորերը տանեյինք կտուրի վրա փռեյինք, վոր արևի տակ չորանան։

Շատ խնդրեց, աղաչեց Գասպար վարժապետը, չդիջացինք։ Դոնների առջև յերևաց նրա կինը, ասպնաջրից կապտած բազուկներով։

— Հըմ, ինչու չե, ուշանում—ասաց նա,—յես շորերը քամեցի, վերջացրի։

— Զեն ուզում, ա կնիկ,—պատասխանեց Գասպար վարժապետը մեղավոր յեղանակով։

Տիկինը կատաղեց։

Ֆալախկան մեջ տեղ բեր, կուզեն,—ասաց նա,—շատ են յերես առել քո թուլությունից։ Դրանց ձեռով միայն կարելի յե մարդ դարձնել։ Դեհ, ճիպոտը վերցրու։

— Ա կնիկ, թող, աստված սիրես,—աղերսեց Գասպար վարժապետը,—յես ինքս քո լվացքը կփռեմ արևի տակ։

Տիկինը յուր աջ ձեռի հինգ մատները բաց արավ, թափ տվեց ոդի մեջ յերեք անգամ դեպի յուր ամուսինը և ասաց խորին արհամարհանքով։

— Առ յե, առ յե, տափը մտնի քեզ նման վարժապետը, տափը...

Ցեվ հեռացավ։

— Այսոր հացս հարամ արիք գլխիս,—դարձավ մեղ Գասպար վարժապետը հուսահատական յեղանակով և թուլացած նստեց մինդարի վրա։

Այս դեպքից մի շաբաթ անցած յես տեղափոխվեցի գավառական դպրոց։

ԻՄ ԳԱՌՆՈՒԿԸ

Ցես կենդանիներ շատ եյի սիրում։

Հայրս ուներ յիրկու ձի։ Հիանալի նժույգներ եյին—մեկը սևագույն, մյուսը վոսկեգույն։ Լեզվի Սահմաղը, մեր հավատարիմ ծառան ասում եր, թե քաղաքում վոչ վոք չունի այդպիսի ձիեր։

Ցես սաստիկ փափագում եյի հեծնել նրանց,

բայց հայրս թույլ չեր տալիս, վախենում եր, վոր ընկնեմ։ Մի անգամ միայն թույլտվություն ստացա վոսկեգույն նժույգը տանել աղբյուր ջուր տալու։ Վերադարձին կամեցա մի քիչ քշել և իսկույն ընկա։

Վոչ մի տեղս չչարդվեց, բայց տունդառուզս մի ամիս ցավում եր։ Համոզվեցի, վոր ինձնից ձի հեծնող չի դուրս գալ և այնուհետև սիրեցի ուրիշ կենդանիներ։ Մենք ունեցինք կովեր, հորթեր, շներ, բայց ամենից ավելի գառներ եկի սիրում։

Հիշում եմ մի սև գառնուկ, վոր հայրս գնել եր ինձ համար։ Վեց ամիս չես նրան պահեցի, մեծացրի։ Գեղեցիկ գառնուկ եր, սիրուն դունչով։ Ուներ մի զույգ փոքրիկ յեղջյուրներ, վորոնց չես ամեն որ հավի ճարպ եկի քսում, վոր փայլեն։

Ցես այնքան սիրեցի այդ գառնուկը, վոր գիշերներն ազամ չեկի ուզում բաժանվել նրանից։ Ամեն որ տանում եկի քաղաքից դուրս՝ արածացնելու։ Անունը դրել եկի Լեյլի։ Նա վազում եր յետևիցս, ուրախ ուրախ թռչկոտելով։ Լիզում եր ձեռներս, դնում եր դունչը ծնկներիս վրա և խոշոր գեղեցիկ աչքերը հառում յերեսիս։

Շաբաթը յերկու անգամ լվանում եկի նրան սապնով, սանրում։ Նրա յեղջյուրները փայլում եկին և կամաց կամաց ծռվում։ Ցես յերազում եկի մի որ նրան տեսնել մեծ խոյ դարձած և յերևակայում եկի, թե ինչպես պիտի կովեր ուրիշ խոյերի հետ և հաղթեր նրանց։

Այդ իմ ամենամեծ փափաքն եր, վորի պատճառով յերբեմն գաղտնի անգամ մոռանում եկի։ Վերջն

այնքան սիրահարվեցի իմ գառնուկի վրա, որ կյանքս պատրաստ եմի զոհել նրա համար։

Սակայն խեղճ բարեկամիս գլխին կուտակվում էին սև ամպեր։ Ոգի մեջ զգում եմի սարսափելի վտանգ։ Ամեն յերեկո հայրս և մայրս քշփշում էին ինչ-որ։ Ցեռ լսում եմի մորս հատ-հատ խոսքերը. «չեմ կարող ուտել նրա միսը, մեղք է, մեղք է» և այլն։

Կասկած չկար, որ խոսքը գառնուկիս մասին էր։ Հայրս ուզում էր մորթել նրան, մայրս չէր թողնում։

Բայց այն ժամանակներն ընտանիքի որենքը ամեն ամենամեծ աղամարդի կամքն էր։

Մի առավոտ, ոհ, յերբեք, յերբեք չեմ մոռանալ այդ դժբախտ որը, հայրս դուրս ելավ յուր դաշույնի պատյանից դանակը և սկսեց սրել։ Վճռված էր. նա պետք է մորթեր ընկերոջս, բարեկամիս, որի հետ այնքան ուրախ որեր եմի անցկացրել։

Ցեռ ընկա հորս վոտները աղերսեցի, որ խնայի գառնուկիս, լաց յեղա, հեկեկացի։ Վոչինչ չոգնեց. հայրս անհողդողդ էր։ Նա գնաց ախոռատուն, բաց արավ խեղճ գառնուկիս և տարավ մեր տան յետևի, փոքրիկ բակը։ Ցեռ վազեցի, գրկեցի նրա գլուխը, համբուրեցի։ Ցեռ չեմի ուզում նրանից բաժանվել։ Հայրս յուր ուժեղ ձեռով հրեց ինձ։ Ցեռ ընկա գետնին, հեկեկալով։

Վերջին անգամ փայլեցին անմեղ բարեկամիս գողտրիկ յեղջյուրներն արեգակի տակ։ Նա անհետացավ պատի յետևում։

Ցերը հայրս մի քանի բոպե անցած յերեսց ար-

յունաթաթախ դանակը ձեռքին, ինձ թվաց, վոր նա մարդասպան և, ավելի՞ վորդեսպան։

Ցեռ ատեցի նրան։

Ինձ համար սկսվեցին դառն, վշտալի որերը։ Ցեռ խելագարի պես եյի, չգիտեյի ինչ անեմ, ինչպես մոռանամ մորթված բարեկամիս։ Ամեն անգամ յերբ հիշում եյի նրան, արտասուքը խեղդում եր ինձ։ Իսկ յես նրան հիշում եյի ամեն ժամ, ամեն վայրկյան։ Հաճախ յերազումս անգամ հալածում եր ինձ բարեկամիս ուրվականը...

ԴԵՊԻ ՊԱՆԴԽՏՈՒԹՅՈՒՆ

Մայրս վերջին անգամ գրկեց ինձ, համբուրեց և ասաց.

— Գնաս բարով, թող ճանապարհդ փշեր չտեսնի։

Հայրս չհամբուրեց ինձ։ Այդ լռին և ինքնամփոփ մարդը յերբեք իր հայրական սերը չեր արտահայտում սովորական գուրգուրանքով։ Բայց, նայելով նրա մռայլ և հուժկու դեմքին, յես զգացի՝ վորքան խոր և նրա վիշտը։ Կյանքի դաժանությունն ստիպել եր նրան բռնել իր միակ վորդու ձեռը և գցել անհայտության ծովը, լավ զգալով, վոր նա լողալու համար չունի վոչ մի փորձ։

Ցեռ գնում եյի մի յերկիր, ուր գնում եյին շատ-շատերը բախտ վորոնելու։ Այնտեղ մարդկային մտքի ու ձեռքի աշխատանքը նոր միայն սկսել եր գնահատվել վորպես շուկայի ապրանք և հարատահարվել։ Ցեռ գնում եյի վոչ բախտ վորոնելու, վոչ հա-

բլստութիւն ձեռք բերելու և վոչ անուն վաստակելու։ Հորս անսպասելի սնանկութիւնը մեզ վերցրել եր թանկագին գորգերից և գցել չոր գետնի վրա։

Յետ չունեցի գոյութեան կռվի համար վոչ մի միջոց և վոչ մի պատրաստութիւն, բացի իմ պատանի հասակից և պողպատյա առողջութիւնից։ Յետ չունեցի վոչ մի նպատակ, վոչ մի յերազ, բացի որվա պարենս վաստակելուց և հորս պարանոցի վրա մի ավելորդ լուծ չդառնալուց։ Միակ փափագս—շարունակել ուսումս—արդեն մեռել եր այն որը, յերբ հայրս ասաց. «Վորդի, ուսումը հարուստների վորդկերանց համար և, քո հայրն այժմ վոչինչ չունի»։

Աղատվելով մորս խանդավառ գրկից, յես սրբեցի յերեսս նրա ջերմ արցունքներից և նստեցի կառք։

Կառք։ Դա մալականի մի մեծ ֆուրգոն եր՝ մինչև կամարաձև ծածկոցը լի զանազան ապրանքներով։ Յետ բարձրացա ահագին հակերի վրա և ինձ համար ընտրեցի մի հարմար անկյուն։ Բացի ինձանից, այնտեղ կային յերեք ճամբորդներ՝ մի գինեվաճառ, վոր գնում եր Բագու գինետուն բանալու, մի շատ դեր և շատ գեղեցիկ կին տեղական զգեստով և սրա պատանի վորդին՝ իր նման գեղեցիկ։

Կառավար մալականը, իր տեղը հարմարեցնելով, բարձրացրեց յերկայն մտրակը և սուլեց։ Նախ շարժվեց մեջտեղի ձին, պարանոցը յերկարացնելով, ապա մյուս յերկուսը։ Կառքը ճռճռաց և հետո արձակեց մի այնպիսի գղրդյուն, վոր կարծես, մի մեծ տուն եր խորտակվում։

Մենք հեռացել եյինք բավական, բայց ծնողներս դեռ կանգնած եյին միևնույն տեղում։ Մայրս շարու-

նակ հեկեկում եր։ Այդ յերևում եր նրա ուսերի վար ու վեր շարժումից։ Հայրս չուխայի յերկայն թևերի տակից բարձրացրեց իր ձեռները դեպի յերկինք և խկուն գցեց վայր։ Արդյոք, նա իմ ճանապարհն և որոնում, թե՞ իր բախտն անիծում։ Բայց զգում եյի, որ իմ ներկայությամբ զսպված արցունքն այժմ հեղեղում և առատորեն նրա հուժկու դեմքը։

Ցեռ շարունակ նայում եյի դեպի յետ ինչպես մերձավորներից բաժանվող աքսորական, որ հույս չունի յերբևե նրանց նորեն տեսնելու։ Կառքն իր յետևից բարձրացնում եր նոսր փոշի, որ ոծանվում եր մայր մտնող արեգակի նարնջագույն շողերով։ Ցերբ բարձրահասակ հորս յերկայն փափախի սուր ծայրը չքացավ այդ վոսկեղոծ փոշու մեջ, ինձ պատշարեց արտասովոր տրտմություն։ Ցեռ զգեցի հրաժեշտի մի թախծալի հայացք իմ ծննդավայրի վրա։ Այնտեղ եյի անցկացրել իմ մռայլ մանկությունը և վաղաժամ տվայտանքներով լեցուն պատանեկությունը։

Թշվառ և այնուամենայնիվ զմայլելի քաղաք։ Վերջին զարհուրելի յերկրաշարժից այնտեղ քար քարի վրա չեր մնացել, բայց դարձյալ գեղեցիկ եր նա արտաքուստ, ինչպես գեղեցիկ և գեղեցկուհին նույնիսկ ցնցոտիների մեջ։ Նրա փլատակներն անթիվ բարդիների, կաղամախիների ու թթենիների միջից նայում եյին վորպես միջնադարյան շքեղ դղյակներ։ Նրա խորտակված յեկեղեցիների ու մզկիթների կանգուն պատերը նմանվում եյին հոյակապ աշտարակների, ուր կարծես, դերված եյին առասպելական գեղեցկուհիները իրենց զողերդական ճակատագրով։ Ա-

մեն ինչ վողողվել եր թաղվող արեգակի հեղեղուն ճառագայթներով։

Արեգակը դաշտերից ու ձորերից քաշելով վոսկեկեղուն շղարշը՝ թաղնվեց մանիշակագույն լեռների յետևում։

Մնաս բարով, անգին ծննդավայր։ Քանի-քանի տարի յե քեզ չեմ տեսել, և ով գիտե, կունենամ բախտ նորեն տեսնելու քո փաղաքուշ կերպարանքը, վոր այնքան պայծառ և իմ հոգնած հիշողության մեջ և այնքան խեղճ, վորքան խեղճ եր իմ մանկությունը։

Կուչ գալով ֆուրգոնի մի խորշում, գինու յերկու տակառների միջև՝ յես ճիգ արի զսպել արտասուքս անարդար պատժված մանկան պես։ Ցավ զուրշուտով իմ դառը հեծկլտանքը խառնվեց անիվների սուր դղրդոցի և կառավարի սուլոցների հետ։ Ախ, արեգակի այդ վերջին շողերի հետ, կարծես, իմ եյությունից անջատվեց ինչ-վոր թանկագին մի կտոր, ընկավ ապագայի մթության մեջ և մեռավ։ Չկա այլևս մարդու համար անապական յերջանկություն այն որից, յերբ նա բաժանվում է ծնողների գուրգուրանքից։

Ինչ փույթ, վոր այժմ յես ազատ եմ, ինքնագլուխ. իմ առջև կանգնած եր անհայտ ճակատագիրը. ինչ ապագա յե հյուսում, արդյոք, այս սֆինքսն ինձ համար, և այսուհետև ով պիտի պաշտպանի ինձ կյանքի ասպարիզում։

Արցունքներիս միջից մի անգամ ևս նայեցի դեպի յետ։ Մութն արդեն կլանել եր կիսավեր քաղաքն իր շրջակա լեռներով ու ձորերով։ Ցերկինքը զարդարվեց աստղերով։ Այդտեղ եր, վոր յես առաջին

անգամ մտածեցի իմ տասնյոթամյա փոքրիկ անցյալի մասին։ Յետ նա պատկերացավ իմ առջև իր ամբողջությամբ։

Վեց տարեկան եմ, յերբ մի որ, առանց իմ ծնողներին հարցնելու, վազեցի մեր դրացի Սարգիս վարպետի ուսումնարանը։ Այդտեղ եմին վոմանք իմ հասակակիցներից։ Յես չուզեցա նրանցից յետ մնալ, թեև չգիտեի՝ ինչ տարբերություն կա փողոցի և դպրոցի մեջ։

Սարգիսը բողոքականների պարագլուխն եր։ Դա մի հեզահամբույր ծերունի յեր, բարձրահասակ, առույգ, ժպտուն։ Յերբ նա անցնում եր, մի տարորինակ հաճույք եմի զգում, նայելով նրա ճերմակ մորուքով զարդարված բարի դեմքին։ Ինձ թվում եր վոր նա մի առանձին սեր և զգում դեպի մանուկները, թեև ինքը չուներ զավակներ, ամուրի լինելով։ Նա հարգված եր ամենքից, նույնիսկ վոչ բողոքականներից։

Բարեբախտաբար, հայրս այդ ժամանակ բացակա յեր քաղաքից, ապա թե վոչ անկասկած պիտի ինձ պատժեր ըմբոստ վարմունքիս համար, մանավանդ, վոր նա առհասարակ բողոքականներին չեր սիրում և նրանց անվանում եր «Հուդայի ծնունդ»։

— Ի՞նչ ես ուզում, զավակս,—հարցրեց Սարգիս վարպետը, դլուխս փաղաքշաբար շոյելով։

— Ուզում եմ կարդալ ու գրել սովորել,—պատասխանեցի յես իմ ամաչկոտ ընույթին անսովոր համարձակությամբ։

— Ծնողներդ են քեզ ուղարկել ինձ մոտ։

— Այո,—ասեցի յես, վախենալով՝ մի դուցե հակառակն ասեմ, չընդունվեմ։

— Ապրես, այսորվանից դու իմ աշակերտն ես։ Անունդ։

— Ալեքսանդր։

— Ազգանունդ գիտեմ, դու ուստա Մինասի վորդին ես։ Ասա ծնողներիդ, վոր յես քեզ կսիրեմ հարազատ հոր պես։ Տեսնում ես, այդ բոլոր մանուկներն իմ զավակներն են։

Մայրս զարմացավ իմ հանդգնության վրա, բայց չընդդիմացավ իմ ցանկության։ Ավելին. նա մինչև անգամ պարծեցավ, վոր իր վորդին ինքն իր կամքով «ուզում է մարդ դառնալ»։

— Այդ լավ է,—ասաց նա,—յերբ դու գրել ու կարդալ կսովորես, ել յես ուրիշներին չեմ տալ կարդալու հորդ նամակները։ Իմ նամակներն ել դու կըգրես։

Ցեղ առանց տատանվելու նա գնեց մի այբբենարան և մի որվա մեջ մետաքսյա կտորից կարեց մի գեղեցիկ «հարդյա» (յերկբերան տոպրակ), վորի մեջ պիտի պահեյի դպրոցական պիտույքները։

Մի քանի ամիս անցած՝ հայրս վերադարձավ Ղուբայից, ուր նա լինում եր տարվա մեծ մասը։ Նա, ինարկե, բարկացավ ինձ վրա, յերբ մայրս հաղորդեց նրան իմ հանդուգն արարքի մասին, բայց վոչ այնչափ, վորչափ կարծում եյի։ Միայն խստիվ պատվիրեց ինձ Սարգիս վարպետից գրել-կարդալ սովորել, բայց նրա հեթանոսական քարոզները չլսել։ Ցերբ խրախուսված բաց արի այբբենարանս և կարդացի մի քանի տող, այն ժամանակ նա ավելի մեղմացավ։ Պարզ

եր, վոր նա յել անգրագետ լինելով, հասկանում եր գրագիտության արժեքը։ Հետևյալ որը, ինձ ճանապարհ դնելով ուսումնարան, նա ասաց.

— Գնա, ավելի լավ ե ուսումնարանում նստել քան շուն-շան վորդիների հետ փողոցներում լակըռթալ։

Ցեվ դառնալով մորս՝ ավելացրեց.

— Հը՛, ինչ կասես, Սոնա, լակոտդ հետո մեզ եվ գրել-կարդալ կսովորեցնի, հմ։ Բայց առաջ իր քույրերին, հետո ծնողներին։

— Ցես քույրերին եվ ուղում եմ ուսումնարան ուղարկել։

— Թող նրանք կույսի մոտ գնան, աղջիկները տղերանց հետ չպիտի խառնվեն, թե չե, ճանաչում ես ինձ։

Ցեվ, այս ասելով, հայրս իր կապույտ աչքերն այնպես վոլորեց, վոր յես սարսափեցի մորս մասին, թեև յերբեք նա իր կնոջ վրա ձեռք չեր բարձրացրել։ Առհասարակ նա այնքան դաժան մարդ չեր, վորքան կարելի յեր կարծել՝ նայելով նրա չափազանց բարձր հասակին և խոժոռ դեմքին։

Չեմ հիշում՝ տարի ու կես թե յերկու տարի մնացի Սարգիս վարպետի ուսումնարանում։ Հիշում եմ այն յերջանիկ որը, յերբ ծնողներս բարեկամների խորհրդով ինձ փոխադրեցին թեմական դպրոց։ Դրժբախտաբար, այդտեղ յերկար չպահեցին։ Հայրս ուզում եր, վոր յես ավելի ռուսերեն սովորեմ, քան հայերեն։ Նա ասում եր.

— Հայերեն լեզվի մեջ հաց չկա, յեթե չես ուզում տերտեր կամ վարդապետ լինել, գնա ռուսերեն

սովորիր։ Ձերը այդ որհնված լեզուն սովորես, յես քեզ կուղարկեմ Մոսկով, վոր դու ինքդ ծախես իմ տորոնը Մասոդովին։ Նա ամեն տարի ինձ խաբում է, հաշիվներս խառնելով։

Յես անցա քաղաքային դպրոց և յերջանիկ եյի, վոր շուտով պիտի խոսեմ ռուսերեն, ինչպես մեր հարևան պրիստավ Միխայել ընկ Ավշարովը։ Յես, իհարկե, չեյի յերազում պրիստավ կամ չինովնիկ դառնալու, վորովհետև հայրս ավելի լավ ապագա յեր խոստանում։ Նա ասում եր.

— Աչխարհի տերը հիմի վաճառականն և. թագավորին ծառայելով՝ մինչև կյանքիդ վերջը ծառայել կմնաս, մեջքդ մեծերիդ մոտ ծռած։

Խեղճ մարդ։ Չեր գուշակում, վոր մի քանի տարուց հետո ինքն ելշատերի հետ պիտի սնանկանա և ընկնի ծայր աստիճան չքավորության մեջ։

Ա՛հ, բախտավոր չի յեղել վոչ իմ մանկությունը և վոչ ել պատանեկությունը։ Այն որից, յերբ սկսել եմ քայլել ծծելեմ կյանքի դառնությունները։ Միջավայրը, ուր ծնվել եմ, անթափանցելի խավար եր, ուր կարող եր խեղդամահ լինել նույնիսկ լիմից շատ պակաս զգայուն հոգին։ Յես ունեյի մի մայր, վոր հեզության տիպարն եր, մի զմայլելի գեղեցկուհի, վոր ծնվել եր ճակատագրի հալածանքը լռությամբ կրելու համար։ Յեվ մի հայր, վոր վորքան արտաքուստ դաժան եր, նույնքան բարի յեր իր հոգու խորքում։ Վորպես զավակ յես սիրված ու փայփայված եյի, հետևաբար նրանց վերաբերմամբ յես գանգատ չունեմ։ Իմ մանկական և պատանեկական տվայտանքների աղբյուրը միջավայրն եր, մթնոլորտը, վոր յես շըն-

չում էր, և այն, ինչ-որ տեսնում ու լսում էր վոչ միայն դրսերում, այլև տանը։ Ծնողներիս հոգեկան հանգստությունը խափանված էր հորեղբորս ժպիտն բնույթով և անզուսպ վարք ու բարքով։ Այդ մարդը մեր գերդաստանի չար վոգին էր, մի անվերջ սպառնալիք իր մերձավորների համար։ Վորքան հայրս աշխատասեր էր, ժուժկալ, ամոթխած և հավատարիմ նամուսի պահանջներին, նույնքան նրա կրտսեր յեղբայրը խռովարար էր և յենթակա իր անձնական կրքերին։ Ատելով աշխատանքը՝ նա սիրում էր վայելել կյանքի հաճույքները, վոր նրա համար ամփոփված էին թղթախաղի, հարբեցողության և իգամոլության մեջ։ Գրեթե որ չեր անցնում, վոր յես չտեսնեի նրա գժտությունը հորս հետ, կամ չլսեի նրա անիրավ պահանջները և փողոցային հայհոյանքները։ Նա անարգում էր վոչ միայն իր ավագ յեղբորը, այլև նրա անմեղ կնոջը, իմ սիրեցյալ մորը։ Քանի-քանի անգամ յերկու յեղբայրների կռիվների ժամանակ իմ մեջ միտք է հղացել հորս պաշտպանելու համար հարձակվել կատաղած կատվի պես նրա խռովարար յեղբոր վրա և յեղունդներով դուրս գցել նրա արյունալի աչքերը։ Բայց տատս պաշտպանում էր իր անզուսպ վորդուն, իսկ յես սիրում էի տատիս իմ մատաղ հոգու ամբողջ զորությամբ։ Խեղճ պառավ. հիշում եմ քո դառն արցունքները և կսկծալի ճիչերը, յերբ կրտսեր վորդիդ բռնում էր մեծ վորդուդ կոկորդը և բռունցքը բարձրացնելով գոռում էր.

«Փող տուր, թե չե շանսատակ կանեմ»։

Հայրս հասակով կես արշին բարձր էր իր յեղբորից և կրկնակի ուժեղ։ Եթե կամենար, մի հար-

վածով կարող եր գետին տապալել նրան, բայց նա այդ չեր անում. նա թե խնայում եր իր մոր արցունքները և թե ամաչում եր կտուրներից նայող հարևաններից։

Ցեռ գիշերում եյի տատիս հետ առանձին սենյակում։ Ամեն գիշեր, յերբ նրա անառակ վորդին ուշանում եր դրսերում, լսում եյի նրա աղոթքի մըրմունջները. «Տեր, դու նրան պահիր, պահպանիր չար փորձանքներից»։ Յերևի նրա մայրական սիրտը նախազգում եր, վոր մի որ, վերջապես, գալու յե մեկն այդ չար փորձանքներից։

Յեվ յեկավ։ Ուշ գիշեր եր։ Ցեռ վաղուց պառկել եյի անկողին։ Տատս այս անգամ անհանգիստ եր սովորականից ավելի, յես եվ նրա պատճառով չեյի կարողանում քնել, թեև պառավին խաբելու համար խռմփացնում եյի, վերմակիս տակից վախկոտ կատվի պես դիտելով նրա շարժումները։

Վերջացնելով իր սովորական աղոթքը, տատս մինդարի տակից դուրս բերեց մի փոքրիկ կապոց, վորի մեջ նա պահում եր մի բուռը սևացած սիսեռներ և գետնի վրա դարսելով նրանց՝ սկսեց համարել։ Այդ սիսեռները թե նրա դվաճությունն եյին և թե միակ միջոցն իր սանձարձակ վորդու բախտը դուշակելու։ Ցերկար ժամանակ նրա վոսկրոտ մատները նորեն խառնում ու նորեն բաժանում եյին սիսեռները։ Նայում եր նրանց խորասուզված, շարունակ մրմնջալով մերթ աղոթք, մերթ անեծք։ Վերջապես, նա սիսեռները ժողովեց կապոցի մեջ, դեն շպրտեց, պահելով միայն մի հատ։ Այդ մի հատիկ սիսեռը նա դրեց հատակի վրա, դուրս բերեց իր բարձի տակից

մի փունջ ասեղներ։ Յերեք անգամ յերեսը խաչակընքելով՝ նա ասեղները մեկիկ-մեկիկ անկեց սիսեռի շուրջը և սկսեց նորեն աղոթել։ Զմայլելի միամտություն. պառավի սնոտի հավատով ասեղները պիտի պաշտպանեին նրա վորդուն չար վորձանքներից։

Հանկարծ գիշերային լռությունն ընդհատվեց մի անսովոր դղրդյունով։

Տատս ցնցվեց, յես նույնպես։ Վոտքի յելանք և դուրս վազեցինք, կարծելով, վոր յերկրաշարժ է։ Լուսին գիշեր եր։ Իր ննջարանի դռների առջև բակում յերևաց մայրս, վոտաբոբիկ, կիսամերկ, բայց շալի մեջ փաթաթված։ Զգացի, վոր յերկրաշարժ չե, այլ մի ուրիշ աղետ։

Զորս անծանոթ մարդ իրենց ուսերի վրա բերում ելին հորեղբորս անշունչ մարմինը, վորի գանգատն մասերից արյունը հոսում եր աղբյուրի պես ինչպես հարյուր տեղից վիրավորված մի ցուլից։

— Աման, բալիս սպանել են,—աղաղակեց տատս մի տարորինակ ձայնով, վոր ինձ թվաց վոչ մարդկային։

— Սպանված չե, Ծաղիկ բաջի, մի վախենար,—ասացին չորս անծանոթները միաբերան և հորեղբորս մարմինը տարան հորս սենյակը և դրեցին հատակի վրա։

— Թող ձեզնից մեկը վազի ուստա Պետրոսին կանչելու,—ասաց հայրս։

Զորսից մեկն անմիջապես վազեց փողոց՝ քաղաքի միակ և նշանավոր վիրաբույժին կանչելու։ Մյուսները պատմեցին յեղելությունը, աշխատելով ուշքի

բերել հորեղբորս։ Պատահել էր հետևյալը։ Հորեղբայրս մի գինետնից հարբած դուրս գալով, հանդիպում է իր մեծ քրոջ փոքրուն, փոր գրեթե նրա հասակակիցն էր։ Չգիտեմ ինչ պատճառով, նրանք վազուց ատում էին իրարու։ Նրանք կռվում էին, հորեղբայրը չարաչար ծեծում է իր քեռորդուն, տապալելով նրան գետին, ապա քայլերը նորեն ուղղում է դինետուն։ Քեռորդին վազում է տուն, վերցնում է իր դաշույնը, վերադառնում է և, յետևից հարձակվելով իր քեռու վրա, յոթ տեղից վիրավորում է նրան։

— Անիծվի նրա ծնունդը, անիծվի,—գոռաց տատը,—յես նրա մոր արդանդը դանակով կպատռեմ։

Ցեկավ վիրաբույժը, կապից հորեղբորս վերքերը։ Ուշքի գալով, նա չգիտեմ ինչ մեղքի համար, մի քանի անգամ հայհոյեց հորս։ Մի բան, փորի պատճառով յես հոգուս խորքում նրան մահ ցանկացա։

Մոտ յերկու ամիս մարդը տառապեց անկողնում։ Տատս նրա քովից չէր հեռանում և ամբողջ խնամքն իր վրա յեր վերցրել։ Նա այժմ ավելի հանգիստ էր, քան աղետը պատահելուց առաջ, ինչպես հիվանդն անխուսափելի անդամահատությունից հետո։ Յերբ վիրավորը ցավերից դանդատվում էր, պառավը հանդիմանում էր նրան։

— Տես,—ասում էր նա, իր կողը բանալով և ցույց տալով մի թիզ յերկայնությամբ և յերկու մատ խորությամբ մի սպի։—Իմ յարան քո յարից պակաս չի, յես կնիկ տեղովս քեզ նման չեյի տնքտնքում։ Ամոթ է։

Հազիվ անցել էր մի քանի ամիս այն պահից, յերբ հորեղբայրս վեր կացավ անկողնից, նա վիրա-

վորվեց յերկրորդ անգամ մի ուրիշ իր նման մեկի հետ կռվելիս։ Այս անգամ վերքը յեղավ մահաբեր։ Տասնյոթ որ տանջվելուց հետո նա վախճանվեց։ Արյունը, վոր հոսել եր նրա վերքերից, խորապես ազդել եր ինձ վրա, այնչափ, վոր գիշերները յերազումս անգամ նա հալածում եր ինձ։ Յեվ այդ պահից ե, վոր յես չեմ կարողանում տեսնել մարդու արյուն, առանց սարսուռ զգալու։

Հորեղբորս վողբերգական մահից հետո իրարու յետևից յեկան մի շարք դժբախտություններ։ Նախ 1872 թվականի յերկրաշարժը գրեթե հիմքից ավերեց մեր տունը, և մենք ստիպվեցինք ամբողջ ընտանիքով տեղավորվել խոհանոցում և ախոռատանը, վոր մի հրաշքով փրկվել եյին ավերումից։ Ապա մի քանի ամիս անցած մեռավ տատս, վոր ինձ համար մի զգալի կորուստ եր։ Այնուհետև մեռավ չորս տարեկան յեղբայրս՝ Գաբրիել անունով, վորին սիրում եյի հոգուս ամբողջ զորությամբ։ Այդ բոլորին հետևեց հոր անսպասելի սնանկությունը և կատարյալ չքավորությունը։

Վերջացնելով քաղաքային դպրոցի դասընթացքը, յես ստիպված յեղա խնդրել իմ մեծ ուսման ծարավը և մի վորևե գործի մտնել։ Բայց ինչ գործ կարող եյի գտնել մի կիսավեր քաղաքում, վոր վոչ արդյունաբերություն ուներ և վոչ ել քիչ թե շատ խոշոր վաճառականություն։

Մեկը մեր հարևաններից ուներ աղի պահեստ։ Նա ինձ հրավիրեց իր մոտ ծառայելու աղ կշռողի պաշտոնով։ Ուրախությամբ ընդունեցի նրա հրավերը, բայց ամսականի մասին խոսք չեղավ։ Ավելի

քան մի ամբողջ տարի աղ կշռելով՝ յես վոչ մի վարձ չստացա, բացի ձեռներիս կոշտերից։ Աղի պահեստանոցից անցա տեղական վոստիկանություն, նույնպես առանց վորևե ամսականի։ Ինձ խոստացան ավագ զրադրի հեռանալուց կամ մեռնելուց հետո նրա պաշտոնն ինձ տալ, բայց մարդը, վոր դեռ յերիտասարդ եր, բնավ մտադիր չեր մեռնելու և վոչ էլ իր պաշտոնից հրաժարվելու։ Ուրթ լինելը ամիս ծառայելուց հետո հուսահատվեցի և դուրս յեկա վոստիկանատնից։

Մինչ իմ մտքերս զբաղված եյին անցյալովս, լսեցի դեղեցիկ ուղեկցուհուս վիաղաքուշ ձայնը.

— Բալաս, քիչ ֆիքր արա, ուրախ պահի քեզ, մենք ավելի լավ քաղաք ենք գնում, Բագու։

— Այնտեղ ծով կա, դիտեմ, ծով,—ավելացրեց նրա պատանի վորդին, ապա դառնալով դինեվաճառին, հարցրեց,—այնպես չե՞, Բալասի ապեր, Բագուն հրաշալի քաղաք է։

Բալասի ապերը պատրաստվում եր ընթրիք անելու։ Դա մի շատ նիհար և յերկարահասակ մարդ եր, փորը մեջքին կպած, մեծ քթով և շատ մեծ բեղերով, վորոնք միանգամայն ծածկում եյին նրա բերանը։ Նախքան պատանու հարցին պատասխանելը նա դուրս բերեց իր խուրջինից վարունգներ, մոթալի պանիր, ապխտած ձուկ, խաշած ձվեր, զանազան կանաչեղեն և մի տկճոր գինի և մեզ հրավիրեց իր սեղանին մասնակցելու։ Յես ախորժակ չունեյի. պատանին նույնպես հրաժարվեց։ Յեվ յերբ դեղեցկուհին յերկաթ թախանձանքներից հետո, վերջապես, համաձայնեց նրա դանակի ծայրից վերցնելու կճպած վարունգի

շերտը, այն ժամանակ միայն Բալասի ապերը հաղաց, բեղերը սրբեց գուլզգուլն թաշկինակով և ասաց Շամախու բարբառով.

— Բագուն ես հարցնում, բալաս, Բագուն քաղաք չէ, հրաշք է։ Հնդստան, Չինուստանին էլ վոր գնաս, նրա նման քաղաք չես գտնիլ։

Ցեվ մի բաժակ գինի կոնծելով, բեղերը նորեն սրբեց և շարունակեց.

— Տես, մի կողմում Ջուր—դա ինքը ծովն է, մյուս կողմում կրակ—դա Սուրախանի գաղն է, յերկինքի կողմն էլ նոթ—դա Բալախանի-Սարունչին է։ Ջուր, գաղ, նոթ, յերեքի մեջ տեղում պպզած է Բագուն։ Քաղաք չի յե, քաղաք, ալամաթ է։

— Ծովը մեծ է,—հարցրեց պատանին։

— Վերջ չունի։

— Քանի կուժ ջուր կլինի նրա մեջ,—հետաքրքրվեց պատանին, վորի անունը Ստեփան էր։

Բալասի ապերը, մի մեծ կտոր պանիր դնելով բեղերի տակ, դանակը բարձրացրեց և ասաց.

— Բալամ, ինչ ասեմ, հաղար ասեմ, քիչ է, տասը հաղար—ելի քիչ է, հաղարան հաղարներից խոսիր։

Հետո շարունակեց նկարագրել նավթային հանքերը, գործարանները, ծուխը, փոշին, մոծակների բազմությունը, մկների խոշորությունը և յերկար կանգ առավ տների բարձրության, փողոցների լայնության և խանութների մեծության ու հարստության վրա։

Նա թե պատմում էր և թե ուտում, մերթ ընդմերթ աչքի տակով նայելով գեղեցկուհուն, վոր, հակառակ իր ծննդավայրի ավանդության, չեր էլ մտա-

ծուռ գայթակղեցուցիչ յերեսը շալով ծածկելու։ Ուտելիս ու խմելիս Բալասի ապոր նիհար կոկորդի ցցված վոսկրը շարունակ ներս ու մտնում ու դուրս գալիս, ինչպես ծտի գլուխը բնից։

Վրա հասավ գիշերը։ Մեր կառքը կանգ առավ առաջին կայարանում։ Կառապանը մեզ առաջնորդեց մի մալականի տուն, իսկ ինքը գնաց ձիերը կերակրելու։ Ինձ զարմացրեց, վոր նա չզանգատվեց, թե ճանապարհը շատ դժվար եր, թե ձիերն անչափ հոգնել են, թե ինքն անոթությունից մեռնում է և այլն և այլն, այն բոլորը, ինչ վոր ասում են հայ և թուրք սայլապանները մի յերեք-չորս վերստ անցնելուց հետո։

Ցուրգոնն այնպես եր ջարդոտել ինձ, վոր մարմնիս բոլոր մասերը ցավում եյին։ Պառկելով տախտակյա մերկ բազմոցի վրա, անմիջապես քնեցի։ Ամբողջ գիշեր յերազումս տեսնում եյի ջուր, կրակ, նավթ, մոծակներ, մկներ և Բալասի ապոր կոկորդի մեծ վոսկրը։

Արևելքն արդեն շառագունել եր, յերբ Ստեփանն ինձ արթնացրեց։

— Արի, արի դուրս,—շտապեցրեց նա ինձ,— տես՝ Բալասի ապերն ինչ է արել։

Դուրս յեկա գավիթ և ինչ տեսնեմ, գինեվաճառն իր յերկայն չուխայի լայն փեշերը կապել է մեջքին, փորի վրա կախել է մի արծաթակոթ դաշույն մի մետր յերկայնությամբ և ուսովը գցել մի չախմախի հրացան, ծայրին մի զույգ յերկաթե յեղջյուր։ Այդ տեսակ յեղջյուրավոր հրացաններ յես շատ եյի տեսել մեր քաղաքում։ Մեր քաջարի վորսորդները

խոշոր ու վանդավոր վորսի հանդիպելիս հրացանը հենում էին գետնի մեջ տնկած յեղջյուրների վրա և այնպես կրակում, վորպեսզի գնդակը չվրիպեր հրացանի շարժումից։

Բալասի ապոր դեմքը շատ խորհրդավոր եր և լուրջ։ Ունքերը խոժոռած և աջ ձեռը դաշույնի կոթի վրա դրած՝ նայում եր հեռավոր հորիզոնին։ Կարծես, ինչ-վոր փոթորիկ եր սպասում այնտեղից։

— Ի՞նչ է պատահել,—հարցրի յես։

Ստեփանը, ձեռը դնելով բերանիս վրա, շշնջյունով արտասանեց.

— Սուս, կամաց խոսիր, Բալասի ապերը բարկանում է։

Հետո, բերանը մոտեցնելով ականջիս, ավելացրեց.

— Ասում է՝ ճանապարհի վրա ավազակներ են յերևացել։

Ցեսս վախեցա, բայց շուտով հետաքրքրությունս հաղթեց յերկյուղս։ Այնքան բաներ եյի լսել ավազակների մասին, վոր փափագեցի գոնե նրանցից մեկին տեսնել մեծ ճանապարհի վրա, թեկուզ կողոպտվելու պայմանով։

Կառքը ճանապարհ ընկավ։ Բալասի ապերը, լուռ, ձեռով մեզ նշան արավ վոտքով իրեն հետևելու։ Միայն գեղեցկուհին կառք նստեց։ Ճանապարհը ծածկված եր խորդուբորդերով և դերբուկներով, ուստի մենք գնում եյինք նրա յեզրով։ Ախ, այլևս չկային իմ ծննդավայրի կանաչազարդ թփերը, ծաղկավետ հովիտները, դալարը, սառնորակ աղբյուրները, թռչունների յերգեհոնը։ Աջ ու ձախ մոայլ ու մերկ բլուրներ, ավազոտ ափաստաններ, աղային լճեր, ցամաք-

քած և ճերմակ, վորպես ձյունապատ դաշտեր։ Վորքան մոտենում էինք Բագվի գավառին, այնքան յերկիրը մերկանում էր բուսականությունից և յերկինքը կորցնում իր հստակությունը։

Ցեռ ու Ստեփանը հետևում էին Բալասի ապորը, ինչպես վորսորդական շներ։ Նա շարունակ նայում իր մերթ հորիզոնին, մերթ աջ ու ձախ, մերթ դեպի յետ, միշտ աջ ձեռը դրած դաշույնի վրա։ Մեր առջևից գնում էր Ֆուրգոնը։ Թեթև զեփյուռը շարժում էր նրա ճերմակ ծածկոցը։ Ժամանակ առ ժամանակ գեղեցկուհին գլուխը դուրս էր բերում ծածկոցի տակից և դեպի յետ նայում, մայրական ժպիտներով լուսավորելով իր զավակի ուղին։ Այդ միջոցներին Բալասի ապերը, յերևի, մտածելով, վոր այդ ժպիտների մի մասն էլ իրեն է ուղղված, վոլորում էր գարիի հասկերի պես յերկայն բեղերը և աշխատում էր նիհար կուրծքը կարելույն չափ ուռցնել։ Ցեվ այդ վայրկյաններին նա իմ աչքում մեկն էր այն հերոսներից, վորոնց տառս նկարագրել էր իր հեքյաթների մեջ։

Իսկ ավազակները տակավին չեյին յերևում։ Կառապանը շարունակ սուլում էր՝ հանգիստ և անհոգ շարժելով իր յերկայն մտրակը։ Ցեվ նրա հանգստությունը խրախուսում էր մեզ, պատանիներիս։ Աշխուժ և վառվռուն Ստեփանը, վոր հինգ տարով փոքր էր ինձնից, այծյամի արագությամբ թռչկոտում էր չոր տատասկների վրայով, մերթ սուլելով, մերթ յերգելով։ Իսկ մայրը շարունակ ժպտում էր յերջանիկ մոր ժպիտներով։ Ստեպ-ստեպ Բալասի ապերը բարկանում էր Ստեփանի վրա և հրամայում կառքից չհեռանալ։

— Մորդ հույսն ինձ վրա յե,— ասում եր նա,— յեթե քեզ մի բան պատահի, բեղերս պիտի կտրեմ։

Հանկարծ ֆուրգոնը կանգ առավ։ Բալասի ապերը մոտեցավ կառքին և ասաց դեղեցկուհուն։

— Վոսկի խանում, իսկի չվախենաս, յես եստեղ եմ։

Ցեվ հրացանը նորեն կախեց ուսին ու ձեռը նորեն դրեց դաշույնի վրա։ Այդ բոլորը նա անում եր այնպիսի լուրջ դեմքով և խորհրդավոր ձևերով, վոր ինձ վրա թողեց շատ խորը տպավորություն։

Սակայն այդ որը յես հաճույք չունեցա ավազակներ տեսնելու և վոչ հետևյալ և վոչ յերրորդ որը։ Ճանապարհին հաճախ հանդիպում եյինք ուղտապանների, վորոնք տակառներով նավթ եյին տանում Բագվից Շամախի։ Հեռվից նրանց տեսնելիս, չգիտեմ ինչու, Բալասի ապերը հրացանը դցում եր ֆուրգոնի մեջ, դաշույնն ել թագցնում եր չուխայի փեշերի տակ և ինքն ել մի տեսակ խեղճանում եր։

Զորրորդ որը միջորեյին մենք մոտեցանք Բագվին։ Ցերը բարձրանում եյինք «Գայլի բերան դռներ» կոչված զառիվայրով, վորի գլխից պիտի յերևար ծովը։ Բալասի ապերը դետնից վերցնելով յերկու հատ ինչ-վոր վոսկրներ և մեկն ինձ, մյուսը Ստեփանին տալով՝ ասաց.

— Դրեք ատամներիդ մեջ։

— Ինչու,— հետաքրքրվեցի յես։

Նա պատասխանեց. թե ով առաջին անգամ ծով է տեսնում, պետք է իր բերանը վոսկր դնի, այլապես յեթե մի որ կամենա ծովում լողանալ, կխեղդվի։ Ցես հավատացի Բալասի ապոր կատակին, այնքան

դեռ միամիտ եյի տասնյոթ տարեկան հասակում։

Ահա և ծովը. ահա վերջապես Բաղդուն իր տափակ կառուցներով, նավերի կայմերով, հանքերի բուրդերով և գործարանների թանձր ծխով, ինձ պաշարեց մի տարորինակ տրտմություն։ Զառիվայրից իջնելով, թվաց ինձ, վոր իջնում եմ մի տեսակ գեհենն, ուր պիտի հավիտենապես տանջվեմ այդ թանձր ծխի ու մրի մեջ։

ԱԼԵՔՍԱՆԴՐ ՇԻՐՎԱՆԶԱԴԵՅԻ ԳՈՐԾԵՐԸ – ԱՌԱՆՁԻՆ ԳՐՔԵՐՈՎ, ՑԵՎ ՀՐԱՏԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՎ

1. Գործակատարի հիշատակարանից և Հրդեհ նավթագործարանում, Թիֆլիս. 1884 թ., 116 եջ։
2. Նամուս, յեկերական վեպ Թիֆլիս, 1885 թ., 215 եջ։
3. Խնամատար, Նորերից մեկը, Թիֆլիս, 1885 թ., 196 եջ։
4. Արամբին, վեպ, Թիֆլիս. 1888 թ., 250 եջ։
5. Զուր հույսեր, վեպ, Թիֆլիս, 1890 թ., 435 եջ։
6. Տասնուհինգ տարի անցած, Թիֆլիս, 1890 թ., 36 եջ։
7. Արսեն Դիմաքսյան, վեպ, Թիֆլիս, 1893 թ., 420 եջ։
8. Վեպիկներ – Ֆաթման և Ասադը, Թանկադին կապանք, Որիորդ Լիզա, Թիֆլիս, 1899 թ., 158 եջ։
9. Կրակ, (պատմվածք), Բաքու., 1896 թ., 85 եջ։
10. Ցավագարը, Թիֆլիս, 1897 թ., 159 եջ։
11. Քաոս, վեպ, Բաքու, 1898 թ., 439 եջ։
12. Մելանիա, վեպիկ, Թիֆլիս, 1899 թ., 112 եջ։
13. Նամուս 2-րդ տպագրություն, Թիֆլիս, 1901 թ., 265 եջ։
14. Ցեվդինե, դրամա 3 գործ., Թիֆլիս, 1903 թ., 76 եջ։
15. Ժողովածու յերկերի, Թիֆլիս, 1903—1913 թ. թ.

Հատ. 1. Հրդեհ նավթագործարանում, Գործակատարի հիշատակարանից, Խնամատարը, Արամբին։

Հատ. 2. Նորերից մեկը, Որիորդ Լիզա, Ֆաթման և Ասադը Թանկագին կապանք, Տասնուհինգ տարի անցած, Խելագարը, Շրջանից արտաքսված, Աբրիսամը, Ցեվդինե։

Հատ. 3. Արսեն Դիմաքսյան։

Հայ. 4 Վերն և մայրը, Վաղդան Ահրումյան, Մելանիա, Հավատարիմ ընկերներ, Գաղափարի գերին, Կրակ, Կյանքի բոցից։

16. Արտիստը, (պատմվածք), Թիֆլիս, 1903 թ., 96 էջ։

17. Պատվի համար, դրամա չորս արար., Թիֆլիս, 1905 թ., 126 էջ։

18. Կործանվածը, Փարիզ, 1906 թ.։

19. Ավերակների վրա, Փարիզ, 1907 թ.։

20. Շառլատանը, կոմեդիա մեկ արար., Փարիզ, 1908 թ.։

21. Արմենուհի, դրամա, Զվեցերիա, 1909 թ.։

22. Ցավագարը և Ջոնի դիշատակները, պատմվածքներ, Թիֆլիս, 1911 թ., 181 էջ։

23. Արտիստը, (պատմվածք), Թիֆլիս, 1911 թ., 91 էջ։

24. Շառլատանը, կոմեդիա մեկ արար., Թիֆլիս, 1912 թ., 40 էջ։

25. Ավերակների վրա, դրամա չորս արար., Թիֆլիս, 1912 թ., 100 էջ։

26. Զար վոգին, դրամա չորս արար., Թիֆլիս, 1914 թ., 142 էջ։

27. Կործանվածը, դրամա չորս արար., Թիֆլիս, 1914 թ., 143 էջ։

28. Արմենուհի, դրամա, Թիֆլիս, 1916 թ., 99 էջ։

29. Պատվի համար, դրամա չորս արար., 2-րդ տպագրություն, Կ. Պոլիս, 1920 թ., 96 էջ։

30. Նամուս, դրամա չորս արար., Կ. Պոլիս, 1920 թ., 106 էջ։

31. Ցոլք պատմվածքներ, Պոլիս, 1920 թ., 140 էջ։

32. Զար վոգի, դրամա չորս արար., Կ. Պոլիս, 1923 թ., 90 էջ։

33. Քառս. վեպ Ցերևան, Պետհրատ, 1926 թ., 132 էջ։

34. Մորգանի խնամին, կատակերգություն չորս արար., Ցերևան, Պետհրատ, 1930 թ., 68 էջ։

35. Կյանքի բոցից, 1 և 2 մաս, Ցերևան Պետհրատ, 1930—1932 թ. թ., 1 մաս 356 էջ, 2 մաս՝ 186 էջ։

36. Հավաքածու փոքրիկ յերկերի, Ցերևան 1930 թ., 156 էջ։

37. Մորգանի խնամին, կատակերգություն չորս արար., Ցերևան, Պետհրատ, 1934 թ., 71 էջ։

38. Քառս., վեպ, Ցերևան, Պետհրատ, 1934 թ.։

39. Զար վոգի, Ցերևան, Պետհրատ, 1934 թ., 127 էջ։

40. Վարդան Աճրումյան, Երևան, Պետհրատ, 1934 թ., 128 էջ։
41. Արտիստ, Երևան, Պետհրատ, 1934 թ., 85 էջ։
42. Հրդեհ նավթագործարանում, Երևան, Պետհրատ, 1937 թ., 14 էջ։

Գլխ. խմբագիր՝ Ռ. Զարյան
Տեխ. խմբագիր՝ Ան. Գասպարյան
Սրբագրիչ՝ Թ. Հովակիմյան

Գրավիտ. լիազոր Ю—9316 Հրատ. 4308.
Պատվեր 1171. Տիրաժ 3000.
Թուղթ 74×110 Տպագրական 31½ մամուլ
Մեկ մամուլում 51200 նիշ. Հեղինակային 1,8 մամ.
Հանձնված է արտադրության 2 հոկտեմբերի 1937 թ.
Ստորագրված է տպագրության 7 դեկտեմբերի 1937 թ.
Գինը 80 կոպ.

Պետհրատի տպարան, Երևան, Լենինի փող. 65

Проз. 1940

(204)

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.
FL0042708

A I/6560